Կազմված է

Բաղկացած է 2 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

15.02.2021թ. N 08-Լ հրամանով

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

_____ Հ. Մովսիսյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 24.01.2003թ.

Գրանցման համար՝ 273.210.03386

ՀՎՀՀ՝ 01545119

13.07.2020թ. գրանցված կանոնադրության թիվ _____ փոփոխությունը գրանցված է Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «__»_____2021թ.

Աշխատակից՝ ----------

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ 2021

1) 30-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2) 32-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը» VI բաժին.

«VI. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը»

«33. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

34. Կազմակերպության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով և չափերով՝

1) պահուստային ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի 10 տոկոսի չափով (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր, ֆորսմաժորային այլ իրավիճակներ).

2) կարողությունների զարգացման ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի 30 տոկոսի չափով (ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և նորոգման նպատակով).

3) սպառման ֆոնդ՝ հաշվետու տարվա շահույթի 60 տոկոսի չափով, որը ներառում է՝

ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը (որակյալ և բարեխիղճ աշխատանքի կատարման համար),

բ. դրամական օգնության ֆոնդը (աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ սոցիալական խնդիրների առկայության դեպքում),

գ. այլ (կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակների համար):

35. Անհրաժեշտությունից ելնելով, լիազոր մարմնի համաձայնությամբ, պահուստային ֆոնդում կուտակված գումարը կարող է ուղղորդվել կարողությունների զարգացման և (կամ) սպառման ֆոնդերին:

36. Կազմակերպության տնօրենը, հիմք ընդունելով 34-րդ կետը, տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ (եռամսյակային ցուցանիշներով), կազմակերպության աշխատողներին հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրում է, որի չափը չի կարող գերազանցել հաստիքացուցակով նախատեսված նրանց մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափը:

37. Հաշվետու տարվա ընթացքում պահուստային, կարողությունների զարգացման և սպառման ֆոնդերի չծախսված միջոցները ծախսվում են հաջորդ հերթական տարում՝ պահպանելով իրենց նախնական նպատակայնությունը:»:

Կանոնադրության փոփոխությունը հանդիսանում է կազմակերպության 13.07.2020թ. գրանցված կանոնադրության անբաժանելի մասը: